

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2 (6)

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2018 թվական, հուլիսի 19, ժամը՝ 14:00

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Մանե Թանդիլյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Կարինե Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ
Վահագն Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն

Ձևաթ. /35379-18 1
31 07 18

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ և Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստին մասնակցող անձինք՝

Անահիտ Անտոնյան Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ապահովման վարչության պետ (նիստին մասնակցում էր Արդարադատության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Սուրեն Քրմոյանի փոխարեն)

Ժորա Ասատրյան Ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատու (Հանձնաժողովի անդամ, Ֆինանսների նախարարի տեղակալի մշտական փոխարինող)

Սամվել Սողոմոնյան Առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, Առողջապահության նախարարի տեղակալի մշտական փոխարինող)

Հասմիկ Զհանգիրյան Ազրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Շմավոն Մկրտչյանի մշտական փոխարինող)

Ժաննա Սիմոնյան «Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի գործընկեր-փաստաբան (Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի հիմնադիր ղեկավար, Հանձնաժողովի անդամ Սեդրակ Ասատրյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ՝

Արսեն Մանուկյան Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ

Արման Ուդումյան Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Ալբերտ Բաբայան Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Ժորա Սարգսյան Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության

(այսուհետ՝ ԱՍՀՆ) աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ

Անահիտ Մարտիրոսյան

ԱՍՀՆ աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ

Մանե Մադոյան

ԱՍՀՆ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Արման Սարգսյան

ԱՍՀՆ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Հայկուհի Գևորգյան

ԱՍՀՆ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն» ստորաբաժանման ղեկավար

Արտակ Մանգասարյան

Զբաղվածության պետական գործակալության պետ

Կարինե Մադոյան

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Միքայել Փիլիպոսյան

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Անուշ Ներսիսյան

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մամլո խոսնակ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան

ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Սուրեն Քրմոյան

Արդարադատության նախարարի տեղակալ

Սեդրակ Ասատրյան

Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» ՍՊԸ-ի հիմնադիր ղեկավար

Շմավոն Մկրտչյան

Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չներկայացվեցին: Հանձնաժողովը հաստատեց օրակարգը հարցերի հետևյալ հերթականությամբ.

1. **Ճանաչողական մաս (սոցիալական գործընկերների գործունեության ներկայացում)**
2. **Քննարկում Հանրապետական գործող կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու կամ Հանրապետական նոր կոլեկտիվ պայմանագիր կնքելու նպատակահարմարության հարցի շուրջ. կողմերի տեսակետները**
3. **Աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողության համակարգի ներդրման տեսլական**
4. **«Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագրի ներկայացում և քննարկում**
5. **Այլ հարցեր**

1. Ճանաչողական մաս (սոցիալական գործընկերների գործունեության ներկայացում)

Օրակարգի 1-ին հարցի շրջանակներում, հաշվի առնելով, որ մասնակիցների մի մասն առաջին անգամ էր մասնակցում նիստին, համառոտ ներկայացվեցին սոցիալական գործընկերության էությունը, դերը, կոլեկտիվ պայմանագրերի էությունն ու դրանց կարևորությունը: Հատուկ անդրադարձ կատարվեց եռակողմ սոցիալական գործընկերությանն ու վերջինիս շրջանակներում ձևավորված Հանձնաժողովի նպատակներին ու խնդիրներին:

Այնուհետև սոցիալական գործընկերության կողմերը համառոտ տեղեկատվություն ներկայացրին իրենց կառույցների գործունեության վերաբերյալ (երբ են հիմնադրվել, հիմնադրման նպատակները, անդամների թիվը, կոլեկտիվ պայմանագրերի թիվը, առկա խնդիրները):

2. Քննարկում Հանրապետական գործող կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու կամ Հանրապետական նոր կոլեկտիվ պայմանագիր կնքելու նպատակահարմարության հարցի շուրջ. կողմերի տեսակետները

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հայաստանի գործատուների հանրապետական միության տեսակետը ներկայացրեց միության նախագահ Գագիկ Մակարյանը: Վերջինս նշեց, որ իրենց կողմից առաջարկվում է կնքել նոր պայմանագիր, ինչի մասին միությունը ԱՍՀՆ-ին տեղեկացրել է նաև պաշտոնական գրությամբ:

Գ. Մակարյանը տեղեկացրեց, որ վերոնշյալ առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կետերի մի մասը լիարժեք չեն կատարվել, որոշ կետեր ընդհանրապես չեն կատարվել (նա ընդգծեց, որ այդ

մասին առավել մանրամասն ներկայացվել է ԱՍՀՆ-ին ուղարկված պաշտոնական գրության մեջ): Գ. Մակարյանի ներկայացմամբ նոր Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը պայմանավորվում է նաև այն հանգամանքով, որ շատ դեպքերում խնդիրներ են առաջանում Հանձնաժողովի կողմից կոնսենսուսով ընդունված որոշումների ընդունման հետ կապված: Վերջինիս դիտարկմամբ, շատ դեպքերում այդ որոշումները Կառավարությունում հաշվի չեն առնվում:

Գ. Մակարյանը նշեց նաև, որ իրենց կողմը, որպես գործատուների ներկայացուցիչ, առավել շահագրգռված է, որ սոցիալ-տնտեսական բաղադրիչը ներառված լինի Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում: Այս առումով նա նշեց, որ գործող Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում, սոցիալ-տնտեսական հարցերին վերաբերող բաժնում չնայած խնդիրներ էին ներառվել կապված փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հետ, սակայն դրանցից քչերն են կատարվել:

Ելնելով թվարկված խնդիրներից՝ Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից առաջարկվել է կնքել նոր Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր:

Գ. Մակարյանը, միաժամանակ նշեց, որ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կետերի իրականացումն ապահովելու համար հարկավոր է բարձրացնել Հանձնաժողովի նախագահի կարգավիճակը: Այս առումով նշվեց, որ իրենք նպատակահարմար են համարում, որ Հանձնաժողովը ղեկավարի փոխվարչապետը: Նման փոփոխությունը, ըստ Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կետերի կատարման արդյունավետությունը բարձրացնելու հնարավորություն կտա:

Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց նաև, որ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրով սահմանվի քվոտա այն մասին, որ Հանձնաժողովի՝ կոնսենսուսով ընդունված որոշումների ավելի քան 50%-ը պետք է ընդունվի Կառավարության կողմից:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կարծիքը ներկայացրեց Բորիս Խարատյանը: Նա նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կառավարության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի միջև 01.08.2015թ. կնքված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների 2015-2018թթ. ծրագիրը լիարժեք չի կատարվել, առաջարկվում է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մեկ տարով, ինչը հնարավորություն կտա մշակել նոր կոլեկտիվ պայմանագրի նախագիծ՝ արդի խնդիրներից ելնելով:

Սոցիալական գործընկերների կարծիքները լսելուց հետո՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Մանե Թանդիլյանը հարցրեց ներկաների կարծիքը՝ Հանձնաժողովի նախագահությունը փոխվարչապետի մակարդակով սահմանելու մասին Գ. Մակարյանի հնչեցրած առաջարկության վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ Մ. Թանդիլյանի կողմից ներկայացված հարցի առնչությամբ Սամվել Սողոմոնյանն արտահայտեց այն կարծիքը, որ նախկին Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի առանձին կետերի չկատարումը ճիշտ չի լինի պայմանավորել այն հանգամանքով, որ գործող կոլեկտիվ պայմանագիրը վատն է: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ շատ դեպքերում պայմանագրում ամրագրված կետերի ու նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ուղղակի քաղաքական կամք: Հաշվի առնելով այն

հանգամանքը, որ ներկայումս ապրում ենք նոր իրողությունում և հարցերի վերաբերյալ փոխվել են մոտեցումները՝ Ս. Սողոմոնյանն առաջարկեց Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի ժամկետը երկարաձգել մեկ տարով, որը հնարավորություն կտա այդ ժամանակահատվածում հասկանալ, թե ինչ խնդիրներ են դեռևս մնացել և արդյոք անհրաժեշտ է Հանձնաժողովի նախագահությունը բարձրացնել փոխվարչապետի մակարդակով:

Անահիտ Անտոնյանի կողմից նույնպես առաջարկվեց երկարաձգել Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը՝ հաշվի առնելով, որ վերջինիս գործողության ժամկետը լրանում է 01.08.2018թ., իսկ նոր Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կնքումը պահանջում է ծավալուն քննարկումներ ու երկար ժամանակ:

Ներկաների տեսակետները լսելուց հետո՝ Հանձնաժողովի նախագահ Մ. Թանդիլյանի կողմից նշվեց, որ Գ. Մակարյանի կողմից բերված փաստարկներն ու բարձրացված խնդիրները կարելի է երկար մեկնաբանել և դրանց վերաբերյալ դիրքորոշումը միանշանակ չէ: Օրինակ, արդյոք միայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարտականությունն է իրողություն դարձնել Հանձնաժողովի որոշումները, թե հարկավոր է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագրում առանձին միջոցառումների համար սահմանել հստակ պատասխանատու մարմին (մարմիններ), որը պետք է կրի միջոցառման իրականացման պատասխանատվությունը:

Ըստ Մ. Թանդիլյանի լսված լինելը խնդիր չէ, բայց խնդիր է դրա իրողություն դառնալը: Հանձնաժողովի նախագահն ընդգծեց, որ այս պահին նշված հարցերին անդրադառնալը գտնում է ոչ նպատակահարմար և առաջարկեց, որ Գ. Մակարյանը (եթե վերջինս դեմ չէ) նախաձեռնի հանդիպում համապատասխան փոխվարչապետի հետ՝ Հանձնաժողովի նախագահությունը փոխվարչապետի մակարդակ տեղափոխելու հարցի քննարկման նպատակով: Այս առումով Մ. Թանդիլյանը նշեց, որ, եթե Գ. Մակարյանը համաձայն է առաջարկի հետ, ապա Հանձնաժողովը նրան կլիազորի հանդես գալ Հանձնաժողովի անունից: Միաժամանակ, հաշվի առնելով ժամկետների սղությունն այն իմաստով, որ գործող Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի ժամկետը լրանում է 2018 թվականի օգոստոսի 1-ին և անհրաժեշտ է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի ժամկետը երկարաձգելու կամ Հանրապետական նոր կոլեկտիվ պայմանագիր կնքելու հարցի վերաբերյալ որոշումն ունենալ հնարավորինս սեղմ ժամկետում՝ Մ. Թանդիլյանն առաջարկեց, որպեսզի Գ. Մակարյանը փոխվարչապետի հետ հանդիպումը նախաձեռնի մինչև 2018 թվականի հուլիսի 25-ը:

Գ. Մակարյանը համաձայնեց Մ. Թանդիլյանի առաջարկության հետ:

Հանձնաժողովի անդամների և նիստին մասնակցող Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողների կողմից Հանձնաժողովի նախագահ Մ. Թանդիլյանի առաջարկության վերաբերյալ սկզբունքային առարկություններ չներկայացվեցին և օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

2.1. Լիազորել Գագիկ Մակարյանին, որպեսզի նա մինչև 2018 թվականի հուլիսի 25-ը համապատասխան փոխվարչապետի հետ քննարկի Հանձնաժողովի նախագահությունը փոխվարչապետի մակարդակ տեղափոխելու հարցը և այդ մասին տեղեկացնի կողմերին: